




Հրատարակելի Գրութիւններ Ղրկել 923 N. Leavitt St., Chicago, Ill.

Պատգ. Փողավր հարկ է նսեւ որոշ ճիգ թարիէ
 եւ միտք յողնեցնէ կերպեր պանելու մատնածիւղե-
 րու եւ Միութեան կազմակերպական մեքենային
 պօրապման համար:

Չնդչոյ Վերջ. Միութեան կէտ նպատակն է Նոր Չնդչոյ թաղամասը կառուցանել Նուպարաշէնի մէջ եւ միջոց ստեղծել որ անհայրենիք ու թափառական հայրենակիցներ տեւական օթեան ու հանդիսաւ գտնեն հոն:

Այս նպատակին իրագործումը պէտք է ըլլայ բոլոր պառպամաւորներու մտասեւեռումը, եւ միայն տակաւ մտքի առջեւ ունենալով պէտք է վիճին ու որոշումներ քուէարկեն:

Մեր սրտազին բաղձանքն է որ յաջողութեամբ պատկուին Պատգ. Ժողովին աշխատութիւնները:

ՄԷԿ ՔԱՆԻ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԵՐ ԺՈՂՈՎՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Շատ յաճախ մեր հայրենակիցները կը քննադատեն մեր քաղաքի մտաւորականները կամ քիչ մը ազէկ գէշ աչքի դարձող մարդիկը, բսկով թէ ինչո՞ւ չեն միանար Միութեան եւ իրենց ոյժն ու միտքը դործածելով չեն աշխատիր զօրացնել Չնդչոյ Վերջինացը:

Այս քննադատները մասամբ իրաւունք ունին եւ ես ուեւ կերպով չեմ կրնար ներել անոնց, որոնք ուսում եւ կրթութիւն ունին եւ սակայն հեռի կը մնան վերաշինական եւ կամ հայրենակցական դործերէ: Այս մեր հայրենակիցները Չնդչոյ մէջ ծնած են եւ Չնդչոյի ըլլալին չեն կրնար ուրանալ ո՛ւր որ երթան եւ ո՛րչափ բարձր կրթութիւն ալ առած ըլլան:

Սակայն իմ տարիներու փորձառութիւնս ինծի այնպէս ենթադրել կուտայ, որ մեր մտաւորական գասակարպը քիչ մ'ալ իրաւունք ունի հետոս պահելու ինքզինքը այսպիսի միութիւններէ եւ կամ կազմակերպութիւններէ:

Թէ ինչո՞ւ:

Ցաւալի է ըսել որ մեր ամէնէն կապիտ եւ գոհակ արտայայտութիւնները ի յայտ կը բերենք մեր անպաճական Ժողովներուն մէջ եւ հոս է որ ինքզինքնիս կը կորսնցնենք:

Երեւակայեցէք Ժողովի մը մէջ մէկը որ տասնեւհինգ երկար տարիներ դպրոցի մը մէջ մաշկեցուցած է իր կեանքի ամէնէն փառքուն տարիները՝ կրթելով իր միտքը եւ ազնուացնելով իր բարքերը, եւ ուրիշ մը որ դպրոցի երես անգամ չէ տեսած՝ յանկարծ յուզումի մը պահուն, կը բարկանայ եւ կը պոտայ այդ մարդուն երեսին. «Դուն բան չես գիտեր, տեղդ նստիր»: Եւ եթէ մեր այդ մտաւորական կոչուած մարդը ուզէ իր միտքը աւելի պարզել, չորս կողմէն քաղաքի մը կը փրթի, ինքզն մարդը յուսահատած տեղը կը նստի եւ յաջորդ Ժողովներուն ալ այս մարդուն երեսը չի տեսնուիր:

Ո՞վ է յանցաւորը: Անշուշտ կրնանք ըսել որ այս մարդիկը պէտք է գիտցած ըլլան մեր հայրենակիցներու բնաւորութիւնները եւ յայնասիրտ գտնուին. բայց պէտք չէ մոռնալ որ ամէն մարդ տարբեր մտայնութիւն մը ունի, եւ կրնայ վերաւորուիլ ասանկ անպատահ արարքներէ, մինչդեռ ուրիշներ կը տոկան եւ գործերին կը շարունակեն:

Հետեւաբար, իմ թերադրութիւնս պիտի ըլլայ մեր հայրենակիցներուն, որպէս զի մեր Ժողովներուն մէջ անմիայն լեզու եւ ցասմունք դուրս չհոսեցնեն իրենց բերաններէն: Աւելի յաւ է լուս մնալ եւ յսել, քան թէ մէկ երկու խօսք բռնելով վերադարձի գիմացինը եւ վիժեցնել դործը:

Երբեմն մեր յարգելի հայրենակիցները պարծանք մը կը սեպեն ուրիշի մը հասցէին վերաւորել աւանդութիւնները՝ նաեւ, բնաւ չխորհելով թէ գիմացինն ալ նոյնչափ եւ աւելի

կրնայ ընել, եթէ ուզէ: Եւ արդէն հոս է որ մեծն ու փոքրը կը զանազանուին:

Մենք պէտք է հարաւ րլլանք որ մեր մէջ ունինք քանի մը կրթուած մտաւորականներ. աշխատինք որ դուրս մնացողներն ալ միանան Միութեան եւ իրենց պահապան ծառայութիւնը ի սպաս գնեն հայրենակցական դործին:

Ազգի մը կամ քաղաքի մը դրամը, նիւթականը չէ որ մեծ անուն եւ նշանակութիւն կուտայ այդ տեղին, այլ անոր մէջ գտնուող անհատներու մտքին ու հոգիին մակարդակն է որ չափանիշ մը կուտայ այդ ազգին կամ քաղաքին:

Գուրգուրանք մեր մտքի վրայ համբուող մտաւորական հայրենակիցներուն վրայ եւ աշխատինք զանազ բերել ու մանաւանդ պահել մեր շարքերուն մէջ:

Նիւ Նարք

Ա. ՓԱՊՈՒՃԵԱՆ

ՊԱՏԳ. ԺՈՂՈՎԻՆ ԱՌԹԻՒ

Չնդչոյ Վերջ. Միութեան Կեդր. Վարչութիւնը իր նախնախնիքն է «Ծովաս» իր Յունիսի թիւով կ'իմացնէին Պատգ. Ժողովին զուարմամբ Յունիս Էին, Նիւ Եորքի մէջ:

Անշուշտ բոլոր մասնաճիւղեր ալ տեղեակ եղան, եւ վստահ են թէ ամէնքն ալ իրենց ներկայացուցիչները պիտի զրկեն այդ օր, տեղեկացնելու իրենց մասնաճիւղերուն ունեցած գործունէութիւնը եւ նոյն ատեն տեղեկանալու միւս մասնաճիւղերու եւ Կեդր. Վարչութեան տարուան մը դործունէութեան:

Իսկապէս կ'արժէ որ տարին անգամ մը այս պատահութիւնը տրուի մեր հայրենակիցներուն: Սակայն կարեւոր այս պատահութիւնը օգտակար կերպով դործածելուն մէջ կը կայանայ, եւ այդ կախում ունի պառպամաւորներու գիտակցութենէն եւ ոյժի մտածումէն:

Լոկ Ժողով ունենալ եւ իրարու քով գալ ինքնին բանկ պիտի չարժէ, եւ Ժամանակի վատնում ու դրամի մոխրակ պիտի ըլլայ, եթէ օգտակարին վրայ չէ որ պիտի մտածենք ու խօսինք:

Պառպամաւորներ պէտք է սրտաւանդութիւն եւ նոյն ատեն պատասխանատուութիւն նկատեն իրենց վստահած դործին յաջողութեան հետապնդումը, եւ ոչ ուրիշ բան: Որովհետեւ Ժողովը որ տեղի պիտի ունենայ հանրութեան շահուն համար է: Հետեւաբար թեթեւ վերաբերում պահապակելի է:

Որոշ է թէ պիտի ունենանք հարցեր, որոնց չորս գաղափարի բախումներ անխուսափելի պիտի ըլլան. սակայն այդ բախումները պէտք է ըլլան շինարարական ոգով: Ընդունելի է թէ անհատներու համոզումները կը տարբերին, բայց երբ լայնօրէն մտածենք եւ մեր եսէն դուրս ելլենք, կարելի պիտի ըլլայ եզրակացութեան մը յանդիլ եւ տեսակէտները նոյնացնել:

Հանրային դործին մէջ անհատականութիւն մտցնել վրնասակար է, ճիշտ է թէ ամէն ոք իր քաղաքին համեմատ պիտի արտայայտուի, բայց ան պէտք է յարգէ նաեւ ուրիշի համոզումը, եւ երբ մեծամասնութիւնը կը վճռէ որ հարց մը այս կերպ լուծուի, հարկ է որ հնազանդի:

Շատ խօսիլ, կամ բռնածին վրայ պնդել պարապ Ժամանապատիւն է եւ սխալ: Կը յուսանք թէ պառպամաւորներ իրենց վրայ դրամած յայտնար պիտի արժեցնեն:

ԾՕՎԱՌԹԻ

ՌԵՍԿՐԻՒԹԻՒՆ

Անոնք որոնք Պրն. Մ. Փոստելեանի գրքէն հաշիւներ քննին իրենց մօտ, թող հաճին շուտով մեղի զրկել զբամբ, որպէս զի մենք ալ հեղինակին փոխանցենք:

Ծ.Վ.

ՄԻԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Մարտի 11-ը բարեկամներէս մին, անհատական իր մէկ նամակով իբր տեղեկութիւններ կը հաղորդէր ինձ Վերաշինարար իրենց մասնաճիւղին նոր ընտրութիւնը, նաեւ իրենց բաղձանքը որ Հայաստանի մէջ հիմնուելիք Նոր Չնգուշը առ այժմ հիմնուել Մարտի 11-ի մէջ, պատճառաբանելով թէ Սիւրիա գտնուող մեր հայրենակիցներն ալ կը փախաբնդին եղբի Մարտի 11-ը գալ: Ուստի Մարտի 11-ի մասնաճիւղը այսպիսով հարցով մը պիտի ներկայանայ Վերաշինարարի այս տարւոյն Պատգ. Ժողովին, ի նիւ Եւրոյ:

Աւելորդ է ըսել արդէն թէ մեր Վերաշինարար Միութիւնը իր կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, քաղեր առած եւ նոյն իսկ 1000 տարբի կանխավճարով մը պայմանաւորուած է Հ. Բ. Բ. Միութեան հետ, որպէս զի Նուարաշինի մէջ շինուելի Նոր Չնգուշ թաղամասը՝ 5 տունով: Մենք բացարձակապէս փոխաճ ենք այս գործին իրականացման ու տարակոյս չունինք որ Միութիւնը պիտի չհեղի իր որդեգրած նպատակէն:

Սակայն հիմնուելով բարեկամիս հաւատարմին վրայ, թէ իրենք այդպիսի հարցով մը պիտի ներկայանան Յուլիսի Պատգ. Ժողովին, եւ նպատակադրմար կը սեպեմ հրապարակաւ խօսիլ այս մասին՝ Պատգ. Ժողովին առաջ եւ հասկնալի ընել բոլոր անոնց որոնք կը խորհին թէ Նոր Չնգուշը կրնայ Հայաստանէն դուրս շինուիլ:

Նայի՛ ամէն Չնգուշի պէտք է բացարձակապէս ըմբռնել թէ Չնգուշի Վերաշինարար Միութիւնը բարեխրական կամ աղքատաբնամ ընկերութիւն մը ըլլալէ աւելի հայրենասիրական կազմակերպութիւն մըն է: Այս Միութիւնը մեր հայրենասիրութեան ծնունդն է, եւ մեր հայրենաբաղձ զգացումներն ու ապագայ յոյսերը երբեք թոյլ չեն տար մեզ որ Նոր Չնգուշը Հայաստանէն դուրս ուրիշ տեղը մը չինկու մասին խորհինք:

Որպէս զի կարենանք Մարտի 11-ը մեր հայրենակիցները եւ բոլոր իրենց պէս մտածողները համոզել որ ետ կենան իրենց անգործնական խորհուրդներէն, խօսինք օրինակներով՝ սկիւսելով Բայրիֆօրնիայէն:

Յըլզնայի չըմանք ունինք բաւական թիւով հայրենակիցներ, որոնք կ'ապրին իրենց հոգեւուն վրայ ու իրարու մօտ եւ գեւ իրենց բոլոր սովորութիւններով եւ լեզուով, իրենք թէ Չնգուշի մէջ ըլլալին: Միայն Սըրբմեհաններ 40—50 անձերով թիւ մը կը ներկայացնեն ու կ'ապրին իրարու գոկից, իրենց մէկ թաղն ալ կոչած են «Վտակ Մահլէ»։ Բայց իրենց այս նպատակաւոր վիճակը բնաւ չէ կրցած զոհացնել իրենց հայրենասիրութիւնը, որպէս զի ըսեն թէ Նոր Չնգուշը իրենք արդէն իսկ Բայրիֆօրնիայի մէջ հիմնած են ու Հայաստանի մէջ Նոր Չնգուշի մը մասին չեն ուզեր մտածել ու գոհիլ: Ընդհակառակը, Բայրիֆօրնիայ մեր հայրենակիցները Չնգուշի Վերաշինարար Միութեան մէջ ամենառաջնորդող զործողներն ու ամենաշերտ բաղձացողներն են, որ Նոր Չնգուշը հիմնուելի Հայաստանի մէջ, որովհետեւ որոշ համոզում զոյացուցած են թէ իրական ու տեւական մայր Չնգուշ մը Հայաստանի հոգեւուն վրայ միայն կրնայ ապրիլ ու գործանալ: Նոյն օրինակը կրնանք տալ Երեւանի համար, որ Յովսէփով եւ Յովսէփի մէջ կ'ապրին: Երեւանի հայրենակիցներու սեւեռակէտն ալ մնայունը եւ հիմնականը կերտելը եղած է եւ է այսօր ալ, եւ այդ Հայաստանի մէջ, որովհետեւ անկէ դուրս հիմնուած ոչ Յովսէփով կրնան երկար կանգ ունենայ եւ ոչ ալ Չնգուշները: Երբ մեր նոր սերունդը ուժացումէ փրկելու գործին մէջ կ'անձրկինք, հապա ինչ ապացոյցներ ունինք ըսելու թէ մեր ամերիկացիներն ու ֆրանսուներն գաւազները պիտի պահեն օտար հողի հիմնուած Չնգուշը, երբ տիրող լեզուն ու շրջապատը պիտի ըլլան օտար: Այս պայմաններուն տակ իրենց զգացումներն ալ պիտի ըլլան օտար ու խորթ հայուն ու Հայաստանին համար:

Աւելի որոշ համոզուելու համար կրնանք օրինակել Սարգիսիւնիներէն, Մարտի 11-իցիներէն, Սեւաստացիներէն ու Սարգիսիւնիներէն, որոնց զաւթականները գրեթէ ամբողջութեամբ կը մնան Սիւրիա: Ասիկա կը բաւէ որ Սարգիսիւնիներ իրենց Նոր Սարգիսիւնի հիմնէին Սիւրիայի մէջ: Բայց ոչ, անոնք ալ գիտեն որ օտար հողի վրայ հիմնուած տանները զօրաւոր արմատներ պիտի չկրնան նետել եւ ուսմա-

նալ, եւ այս պատճառաւ ալ իրենց ձեռնարկները սահմանափակած են այդ վայրերուն մէջ:

Բարեկամներ ամենամեծ օրինակը կրնայ ըլլալ մեզ: Ան իր լայն միջոցներով ամէն կողմ զարդաներ, արհեստանոցներ ու սրահանոցներ հաստատած է եւ կը հապալ գանոնք, սակայն իր հիմնելիք Նուարաշին քաղաքը պիտի չինէ Հայաստանի մէջ, եւ որուն մէկ թաղն ալ ապահովարար պիտի ըլլայ վարդան Նոր Չնգուշ թաղամասը: Վերջապէս գաղութահայութեան իսկըն ու միտքը դարձած է զէպի Հայաստան, ամէն քաղաքացի ու տեղացի կ'ուզէ հոն ամփոփուիլ ու մնալուն կերպով կապուիլ վերածնող Հայաստանին ու հայութեան հետ: Բացառութիւն կողմողը մենք Չնգուշիցիներն ենք: Ո՛չ երբեք, հայրենակիցներ, պէտք է քիչ մը յատկ նայինք եւ այժմէն տեսնենք որ մեր այսօրուան հիմնելիք հինգ տունը՝ Հայաստանի մէջ՝ 25 տարիէն 15 տուն պիտի ըլլայ՝ բնական աճումով եւ պիտի ունենանք բնակչութիւն մը զտարին հայ մշակոյթով ու բարքերով՝ հայուն եւ Հայաստանին համար, որով միայն յազնդում պիտի գտնեն մեր հայրենասիրական բաղձանքները եւ պատկուի նաեւ Չնգուշի Վերաշինարար Միութեան որդեգրած նպատակը: Իսկ Հայաստանէն դուրս ըլլալիք բոլոր զոհողութիւնները պատարարուած են 25 տարիէն շատ աւելի կարճ ժամանակի մը մէջ անկանալ ու անհետիլ:

Մարտի 11-ը յայտնուած միտքը շատ անհեթեթ է ըստ իս, եւ պէտք չէ անով զբաղիլ Պատգ. Ժողովին մէջ:

Վերջացնել առաջ պիտի սրբել թեյազրել Մարտի 11-իցիներուն, որ Նոր Չնգուշը Հայաստանի մէջ միայն երեւակոյցեն ու այդ նպատակին համար կեդր. վարչութեան բացած հանգանակութեան մասնակցին իրենց մէկ քանի ֆրանքիներով: Այսօր դեռ գծաւոր է բոլորին ալ սրբել ընել ներկայ Հայաստանի եւ շինուելիք Նոր Չնգուշը, որ անգուշ է: Տարի մը վերջ երբ բացարձակ իրականութիւն ըլլայ, այն տեսնելու որ ալ պիտի սրբենք ու պիտի փախաբնդենք որ գոնէ անգամ մը այցելենք հոն: Եւ որոշապէս այս պիտի ըլլայ վաղուան իրական պատկերը:

ՍՆԻ ԲԱՐ

ՈՂՋԵՐԹԻ ՍԵՂԱՆ

«Ծովառ»ի երկու եռանդուն անդամներուն, Պրն. Մ. Յատկալուրեանի եւ Տէր եւ Տիկին Գ. Յովսէփեանի քաղաքէս մեկնումին տաթիւ, Ծովառի վարչութիւնը զեղեցիկ դատարար ունեցող պատուել գանոնք ուղղելով սեղանով մը:

Սեղանը լաւ կերպով պատրաստուած էր Տէր եւ Տիկին Պ. Յատկալուրեանի բնակարանին մէջ, Յունիս 14, Շարաթ երեկոյ: Ներկայ էին «Ծովառ»ի բոլոր անդամները եւ բարեկամներ՝ իրենց համեստափայլ տիկիններով: Պրն. Մ. Իսրայէլեան յատկապէս Միւրօքիէն եկած էր այս ուրախութեան փայլ մը տալու իր ուրախ երգերով ու եղանակներով: Պրն. Ճորճ Գազարեան ընկերակցելով Մ. Իսրայէլեանի ուրախ պահները շատ աւելի հաճելի ընծայեց:

Լման գառ մը խորովելու գործը յանձնուած էր Պրն. Յ. Խոհարարեանի, որ երբ խորոված դուր սեղան բերաւ՝ միայն գտաւ մը կարմիր ջուր եղաւ իր վարձատրութիւնը:

Խորոված գառան վրայ ողջերթի բաժակները պարպուեցան եւ քաղցր մթնոլորտ մը ստեղծեցին: Պարերը եւ երգերը աննախնդրաբար ուրախութիւն պատճառեցին ամէնքին: Այդ զիշեր յիշատակելի պիտի մնայ «Ծովառ»ի ընկերական տարեգրութեանց մէջ:

*** Յաջորդ օր, Յունիս 15-ին, նախորդ գիշերուան ուրախացողները եւ մի քանի ուրիշներ եւս այս անգամ Տէր եւ Տիկին Ն. Յատկալուրեանի բնակարանը հաւաքուեցան եւ բոլորուեցան ճոխ սեղանի մը շուրջ, կարծես յրացնելու համար երկկի պակաս մնացածը: Ուրախութիւնը տեւեց մինչեւ երեկոյ. ներկաներ առիթը ունեցան լաւ կերպով դուարձանալու եւ մեկնողներուն բարի ճանապարհ մաղթելու:

Այս առիթով յիշենք մեր շնորհակալութիւնները Տէր եւ Տիկին Յատկալուրեանի եւ Տէր եւ Տիկ. Խոհարարեանի, Շարաթ երեկոյեան իրենց յանձն առած պատրաստութիւններուն համար: Շնորհակալութիւն նաեւ Տէր եւ Տիկ. Յատկալուրեանի, որ երկրորդ առիթը առին մեզ կրկին ուրախանալու իրենց պատրաստած ճոխ սեղանին շուրջ:

ՆԵՐԿԱՅ ՄՐ

ՄԻԼՎՕՔԻՒ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԸ

Միլվոքի բնակող Չնդուչի հայրենակիցները շատ քիչ թիւ մը կը կազմեն, հազիւ 8—10 հոգի: Դժբախտաբար չկրնանք այս ամէնքը տեսնել, սակայն մէկ քանիքն հետ որ տեսնուեցայ, լաւ տրամադրուած դատալ գէշիլ Չնդուչի Վերաչինացը:

Դժբախտութիւնը այն է որ տակաւին չեն կազմակերպուած այլեւայլ պատճառներով:

Նկատել ունենալով իրենց կարգ մը արդելքները, թէև փորձ չըլլի կազմակերպուել վիճակի մը վերածել զիրենք, սակայն իրը պարտականութիւնն ինդրեցի որ գոնէ Կեդր. Վարչութեան բացած հանդանակութեան բերին իրենց մասնակցութիւնը:

Ուրախ եմ որ երկու անձինք իրենց մասնակցութիւնը բերին, որոնց անունները «Ծովառ»-ի այս թիւով կը հրատարակուի, եւ քանիներ այլ, որոնք գործերու թուաթիւնն պատճառաւ չկրնան անմիջապէս մասնակցել, խոստացան յետագային իրենց մասնակցութիւնը բերել: Կը յուսանք թէ անոնք այլ իրենց խօսքին վրայ հաստատ պիտի ըլլան:

ԱՅՅԵԼՈՒ

ՉՆԳՈՒՇՅԻՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԷՆ

ՇԻՔԱԿՕ. — Յունիս 19, կէսօրին Պրն. Մ. Յատկալուրեան քաղաքէս մեկնեցաւ Նիւ Եորք, անկից ալ Ֆիլադելֆիա երթալու համար: Յաջորդութիւն կը մաղթենք «Ծովառ»-ի եւսանդուն աշխատակիցին:

*** Նոյնպէս Յունիս 19-ի առաւօտ «Ծովառ»-ի անդամ Տէր եւ Տիկին Գ. Յովսէփեան մեկնեցան Քալիֆօրնիա՝ իրենց երկու փոքրիկներով միասին: Գ. Յովսէփեան իր այս ճամբորդութիւնը կ'ընէ ինքնաշարժով: Բարե ճանապարհ եւ յաջողութիւն կը մաղթենք:

*** Պրն. Մ. Իսրայէլեան Միլվոքիէն քաղաքս այցելեց ու կրկին վերադարձաւ իր տեղը:

ՊՈՍԹՈՆ. — Հայրենակից Պրն. Յակոբ Ազնաւորեան, որ այս կազմերը եկած էր այցելութեան համար, մեկնեցաւ Նիւ Օրլէան, Լուիզիանա, հոն հաստատուելու համար: Այս առթիւ երկու տարբեր նուիրեց «Ծովառ»-ի: Բարե ճանապարհ եւ յաջողութիւն կը մաղթենք:

ՅՐԷՉՆՕ. — Ատիւշի հայրենակիցներէն Տէր եւ Տիկին Գրիգոր Գրիգորեան մանչ դուստկ մը ունեցան: Մեր խնդակցութիւնը կը յայտնենք:

*** Մայիս 13-ին Տէր եւ Տիկին Ասլան Սրբրմեան հրապարակեցին իրենց բոլոր ազգական բարեկամները՝ իրենց թոռան — մանչ դուստկ Տէր եւ Տիկին Մարթին Սրբրմեանի — քառասունքին տոթիւ: Տիկին Սանըմ լաւ պատրաստութիւն տեսած էր հիւրերը գոհ թողելու համար: Ներկաներ սեղանին շուրջ բոլորուած բարեմաղթութիւններ բրին որ պղծակը մեծնայ հայկական առաքինութիւններով օժտուած:

*** Յունիս 1-ին Տէր եւ Տիկին Ծէք Քէօսէեան իրենց որդւոյն Ճանիին 15-րդ տարեկարձը ածնեցին Սէլմա, իր եղբորը Յովսէփ Վարդապետին բնակարանին մէջ:

Ճոխ պատրաստութիւններ տեսած էին: Սեղանին շուրջ եղան բարեմաղթութիւններ եւ վարդապետը օրհնեց ներկաները, որոնք մեկնեցան ուշ առնելով գոհ ապաւորութեամբ:

*** Յունիս 6-ին Տէր եւ Տիկին Ս. Ս. Սրբրմեան իրենց կրտսեր որդւոյն Ֆրէտիին յաջողութեամբ Կրէմլը սփուլը լրացնելուն համար պատրաստած էին ճոխ սեղան մը, որուն շուրջ բոլորուած էին Տիարք եւ Տիկնանք Ա. Տադատիկեան, Քէօսէեան, Յակոբեան, Փետա եւ Մայր Մատաչեան, Մ. Թորոսեան եւ Սրբրմեան եղբայրներ:

Սեղանին վրայ եղան բարեմաղթութիւններ, որպէս զի Ֆրէտին Հայ սփուլն ալ աւարտէ յաջողութեամբ: Ֆրէտին հայրը Ս. Ս. Սրբրմեան այս առթիւ 5 տարբեր նուիրեց «Ծովառ»-ի: Սեղանին վերջ շէրի Ալեքանին թոռը՝ Մասիսին տղան՝ Անդրանիկը սկսաւ պարել Լիւսին եւ Ֆրէտին նուագակցութեամբ եւ երկու վայրկեանի մէջ զոյգացուց 7 տարբեր նոյնպէս «Ծովառ»-ի համար: Ուրախութիւնը տեսեց ուշ առնել եւ ներկաներ մեկնեցան գոհ սրտով:

Կ. Ս. ՍԵՐԸՄԵԱՆ

ՄԱՐՍԷՅԻ. — Մայիս 3-ին Շարաթ երկույ տեղի ունեցաւ հայրենակցութիւն ալիքի Տիկին Մարիամ Յովսէփեանի աղջկան հարսանիքը: Ներկայ էր Չնդուչի եւ ոչ Չնդուչի հայրենակիցներու ստուար բազմութիւն մը: Հարսանիքը անցաւ շատ փայլուն: Գիշերը ուշ առնել հայրենակիցներ զնչէին ուղիւ իրարմէլ բաժնուիլ: Մեր խնդակցութիւնը կը յայտնենք Տիկին Յովսէփեանի եւ փեսային Պրն. Նշան Նիզամեանի ու երջանիկ օրեր կը մաղթենք նորաստաններուն:

*** Հայրենակից Պրն. Մ. Մարիեանի Տիկինը կատարեալ ապաքինած է իր հիւանդութենէն: Մեր խնդակցութիւնը կը յայտնենք:

Պ. ՏԱՐԳՈՒՆԵԱՆ

ՏԽՐՈՒՆԻ

ՇԻՔԱԿՕ. — Մայիս 30-ին տեղւոյս Քառնթի հիւանդանոցին մէջ իր հոգին տանողից Տիկին Վարդէր Ս. Թէլլոյեան 55 տարեկան հասակին մէջ, ինր ամիս անկողնոյ ծառայել յետոյ:

Թողման տխուր տրտնոյթիւնը տեղի ունեցաւ Հայր. Առաք. Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, ձեռնադրութիւն Տէր Վ. Քհնյ. Կիւրառեանի:

Տէր հայրը խօսեցաւ դամբանականը եւ թուեց հանդուցեալ բարեմասնութիւնները, որպէս եկեղեցւոյն եւ առաքինի մայր մը: Դադապին կը հետեւէին իր բարեկամները եւ հայրենակիցները. ծաղկեղսակներ դրկած էին շատ մը բարեկամներ: Մարմինը ամփոփուեցաւ Մառնթ Օլիվ գերեզմանատունը:

Ի սրտէ կը ցաւինք այս կորուստին համար: Տիկին Վարդէր միշտ ալ զուրկուրտ վերաբերում մը ունէր իր հայրենակիցներուն հանդէպ: Ամէն մէկ հայրենակից տեսնելու կ'ուրախանար, կը խօսէր Չնդուչի անցեալին եւ քաղցր յիշատակներ կ'արթնցնէր ունկնդիրներուն սրտին մէջ:

Մեր ցաւակցութիւնը կը յայտնենք եւ երկնային միջթարութիւն կը մաղթենք Պրն. Ս. Թէլլոյեանի եւ բոլոր սգակիր պարագաներուն: Հանգիստ իր ածինին:

ՅՈՒՂԱՐԱՄԱՆՈՐ

*** Յաւի սիրտ կը զուժենք դամբանակէտ մահը մը հայրենակից Պրն. Սարգիս Տադատիկեանի, 45 տարեկան տակին մէջ: Հանդուցեալ որ յանկարծամահ եղաւ սրտայանդութիւնով, իր ետին կը թողու իր կինը եւ վեց զաւակներ: Մեր խոր վիշտը կը յայտնենք բոլոր սգակիր պարագաներուն:

ԵՐՐՈՐԴ ՑԱՆԿ

(Խոստումներ բացուած նուիրատուութեան համար)	
Տէր եւ Տիկին Կերակոս Թովմատեան, Միլվոքի Պրն. Ս. Իսրայէլեան, Միլվոքի	\$50.00
Գումար՝	40.00
Նախարդ գումար՝	90.00
	1148.70
Ընդհանուր գումար՝	\$1238.70

«ԾՕՎԱՌ»-Ի ՆՈՒԷՐՆԵՐ

Տէր եւ Տիկին Կ. Թովմատեան, Միլվոքիէն	10.00
Ս. Ս. Սրբրմեան, Սէլմա	12.00
Յակոբ Ազնաւորեան	2.00
Գումար՝	24.00

ՇՆՈՐ ՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Սորին շնորհակալութիւնս կը յայտնեմ Ծովառ Ընթերցարկեան բոլոր անդամներուն, Շիքալոյէն մեկնութեան առթիւ ինձ տրուած ընդունելութեան համար:

Մ. Ս. ՅԱՏԿԱՆՈՒԹԻՒՆ

ՄՍՍՅԱՆՔ

«Ծովառ»-ի վարչութիւնը ստացած է հայրենակից Արամեանի «Ուղեցոյց Նիւ Եորք քաղաքի եւ չրջանի հայրենակցներուն համար» հրատարակչը ջանադած է Նիւ Եորքի հայ հասարակութեան մէկ պահապար լրացնել իր «Ուղեցոյց»ով, որ կ'արժէ գնահատել: